Ռոբերտ Ուռուտյանի ծննդյան 80–ամյակը

ՀՀ ԳԱԱ Լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի ընդլայնված նիստում բավականին ջերմ մթնոլորտում նշվեց ինստիտուտի երկարամյա աշխատակից, տեխնիկական գիտությունների թեկնածու Ռոբերտ Լիպարիտի Ուռուտյանի ծննդյան 80–ամյակը: Նրա գիտական, ավելի մասնավոր՝ գիտատեխնիկական գործունեությունը սերտորեն առնչվում է հաշվողական (մաթեմատիկական), կիբեռնետիկական, իսկ վերջին տասնամյակներին նաև համակարգչային լեզվաբանության առանցքային հարցերին: Ռ. Լ. Ուռուտյանը մեզանում այն առաջին գիտնականներից է, որոնք տևական ջանքեր և աշխատասիրություն են հանդես բերել հայերենի բառային միավորների, բայական կապակցությունների կաղապարային, այլև ձևային նկարագրության հարցերում:

Այս բնագավառում նա հեղինակ է «Կիբեռնետիկան և լեզվաբանությունը (Ե., 1978), «Ժամանակակից հայերենի բայական բառակապակցությունների ձևային նկարագրությունը» (Ե., 1984) մենագրությունների, հեղինակակից նույն բնույթի զգալի թվով համատեղ աշխատությունների, ինչպես նա բազմաթիվ գիտական հոդվածների և առաջարկությունների:

Ելույթ ունեցողները նշեցին, որ այս հոբելյանը հայրենիքին և ժողովրդին անմնացորդ նվիրված գիտնականի, սրտացավ ընկերոջ, ընտանիքի հոգատար հոր իմաստալից կյանքն է խորհրդանշում: Ռ. Ուռուտյանը ինստիտուտի նվիրյալներից է, տարիներ շարունակ սիրով և մեծ պատասխանատվության զգացումով է կատարում գիտության մշակի դժվարին, բայց նաև սիրելի գործը: Գիտական հետազոտության բոլոր ոլորտներում՝ «ԳՈՀԱՐ» (M3) լամպային հաշվողական մեքենայի

արագագործությունը խթանելուն առնչվող աշխատանքներ, «Գառնի» թարգմանական մեքենայի գլխավոր կոնստրուկտոր, տեղեկատվական հաշվողական համակարգերի լաբորատորիայի վարիչ, ապա ինստիտուտի բարբառագիտության բաժնում ատլասի համար հավաքված առկա բարբառային նյութը ծրագրավորելու և թվայնացնելու աշխատանքների ղեկավար, Ռ. Լ. Ուռուտյանը շարունակում է աշխատել գիտությանը նոր բան հավելելու գիտակցությամբ և պատասխանատվությամբ։

Լինելով տեխնիկական գիտությունների թեկնածու՝ երկար տարիներ զբաղվել է հայոց լեզվի ձևային նկարագրության խնդիրներով՝ նպաստելով մեքենական թարգմանության աշխատանքներին։ Ինստիտուտը, այսօր նորովի արժևորելով և գնահատելով վաստակած մտավորականի գիտական ուղին և ձեռքբերումները, մաղթում է ուժ, եռանդ և կորով, երկար տարիների ստեղծագործական աշխատանք։